Մրցույթ՝ «Երևանի հ.120 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «ֆիզիկա» (8 դասաժամ), «Իմ հայրենիքը» (2 դասաժամ), «Իմ հայրենիքը և աշխարհը» (2 դասաժամ), «Հայաստանի պատմություն» (3 դասաժամ), «Համաշխարհային պատմություն» (2 դասաժամ), «Հասարակագիտություն» (1 դասաժամ), «Տեխնոլոգիա» (4 դասաժամ) դասվար (19 դասաժամ), «Հայոց լեզու» (10 դասաժամ), «ՆԶՊ» (10 դասաժամ), «Մաթեատիկա» (15 դասաժամ) և «Ֆիզիկա» (16 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2025թ. օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 8-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025թ. սեպտեմբերի 10-ին՝ ժամը 14:00-ին**, Երևանի հ.120 հիմնական դպրոցում, հասցե՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 207: Տեղեկությունների համար զանգահարել (010) 57-34-60 կամ (010) 57-56-60 հեռախոսահամարներով: